ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

6 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2021 թ.

№ 14 (1078)

Թերթի առաջին համարը լույս է տեսել1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 56-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՑՅԱԼ ՉԷ ՄԻԱՅՆ, ԱՅԼԵՎ ՆԵՐԿԱ

Մանկավարժական համալսարանի գիտական գրադարանի հումանիտար ընթերցանության սրահում նոյեմբերի 26-ին Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական և Բեյրութի Հայկազյան համալսարանների միջև ստորագրվեց Համագործակցության հուշագիր՝ կրթական միջավայրի բարելավմանն ուղղված մի շարք ծրագրեր իրականացնելու նպատակադրմամբ:

ՀՊՄՀ ռեկտորի պաշտոնակատար, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Խոեցյանը և վերապատվելի դոկտոր Փոլ Հայդոսթյանը խոսեցին համագործակցության հնարավոր ուղիների մասին, մատնանշեցին ակնկալվող ծրագրերը:

«Սա հիշարժան օր է 100-ամյակի շեմին ոտք դրած մեր համալսարանի կյանքում,-ասաց Աշոտ Խոեցյանը՝ ընդգծելով սփյուռքահայ կառույցների շարքում Բեյրութի Հայկազյան համալսարանի ուրույն դերը, որը քառորդ դար հայանպաստ գործունեություն է ծավալում՝ կրելով հիմնադրի՝ Արմենակ Հայկազյանի անունը:- Մեր համալսարանները ներքին ընդհանրություններ ունեն, և մենք ունենք մեկ նպատակ՝ խորացնել մեր կրթական համագործակցության դաշտը, ամրացնել Հայաստան-Սփյուռք կապը, մեր մշակութային,

գիտակրթական արդյունքը տեսնել մեկ ամբողջության մեջ»:

Հայկազյան համալսարանի ռեկտոր դոկտոր Փոլ Հայդոսթյանը նկատեց՝ Մանկավարժական համալսարանի առաքելությունն ու փորձը մեզ պիտի միացնեն: Հայաստան գալուց առաջ Սփյուռքի տարբեր ուսումնական հաստատություններ է այցելել և վստահ է, որ «միասնական տեսիլքով պետք է առաջ գնալ»:

Դոկտորը խոսեց հայկական ինքնության, հայ ուսուցչի, արևմտահայ լեզվի և նրա դասավանդման խնդիրների շուրջ:

«Հայկազյան համալսարանը 67 տարի ի վեր հայ դպրոցի համար ուսուցիչներ և թերթերի համար խմբագիրներ է պատրաստել՝ հավատարիմ իր առաքելությանը,-ասաց ռեկտորը՝ մի առանձին հպարտությամբ ընդգծելով, որ ամենուր իրենց շրջանավարտներն են: -Ես ուզում եմ հայագիտությունը տեսնել որպես գիտություն, սատարենք իրար, նոր սերունդը կարոտ է նոր մեթոդների, մենք միասնաբար կարող ենք իրականացնել մեր առաքելությունն ու նպատակները»:

Այնուհետև անցկացվեց Բեյրութի Հայկազեան համալսարանի գիտական կենտրոնի հոբելյանական հատորի և և Հայկազեան հայագիտական հանդեսի 41-րդ հատորի շնորհանդեսը:

Գիտական գրադարանի տնօրեն Տիգրան Պետրոսյանցը ողջունեց շնորհանդեսի մասնակիցներին, Բեյրութի Հայկազեան համալսարանի ներկայացուցչական կազմին և 41-րդ համարի հոդվածների հեղինակներին, ինչպես նաև հյուրերին՝ հավաստելով՝ ով մեկ անգամ առնչվում է հանդեսին՝ մշտապես կապվում է նրա հետ:

Հոբելյանական հատորը ներկայացրեց գրականագետ Արծվի Բախչինյանը: Նա հանգամանորեն անդրադարձավ իր տեսակի մեջ անսովոր հատորի բովանդակային և կառուցվածքային առանձնահատկություններին, հատոր, որը հավատարիմ է մնացել իր առաքելությանը՝ կամրջելով Սփյուռքն ու Հայաստանը:

➢2

ՄԱՏՆԱՆՇՎԵՑԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՈՒՂԻՆԵՐԸ

Նոյեմբերի 18-ին Մանկավարժական համալասարանում ռեկտորի պաշտոնակատար Աշոտ Խոեցյանն ընդունեց Հայաստանում Շվեդիայի Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Ն. Գ. պարոն Պատրիկ Սվենսոնին:

«Մեր համալսարանը միջազգային համագործակցության լավ ավանդույթներ ունի, և մենք շատ ենք կարևորում և շարունակում ենք ընդլայնել մեր միջազգային կապերը»,-ասաց Աշոտ Խոեցյանը:

Ռեկտորի պաշտոնակատարն ասաց, որ որպես աշխարհագրագետ մշտապես իր հետաքրքրությունների շրջանակում է եղել Շվեդիան՝ իր քաղաքակրթական մշակույթով ու ավանդույթներով, կրթական լայն հնարավորություններով, բնությամբ և էկոլոգիական բարձրակարգությամբ, մեծ թենիսի ուղղվածության գերակայությամբ և հատկապես ժողովրդավարական երկրի օրինակելիությամբ:

«Ուրախ կլինենք, որպես պատվավոր հյուր, ձեզ տեսնել 2022 թվականին նախատեսվող՝ մեր համալսարանի 100-ամյակի միջոցառումներին»,-ասաց ՀՊՄՀ ռեկտորի պաշտոնակատարը՝ ընդգծելով.«Մեր կրթական համակարգը բարեփոխումների շրջանում է, և մեր գիտակրթական հետագա զարգացումներում մեծ աջակցություն կլինի ձեզ հետ համագործակցությունը: Շվեդական կրթական համակարգի օրինակելի և դրական փորձի ներդրումը Մանկավարժական համալսարանում մեծապես կնպաստի բուհի կրթական գործընթացների առաջընթացին»:

Աշոտ Խոեցյանը ներկայացրեց բուհը՝ մատնանշելով հնարավոր համագործակցության ուղիները հատկապես մշակույթի, նախադպրոցական և հատուկ կրթության մասնագիտությունների շրջանակում:

«Մենք մեծ կարևորություն ենք տալիս ներառական կրթությանը և եվրոպական արժեքների ներառմանը մեր կրթական համակարգում՝ դրանք համարելով կարևոր գործընթացներ: Կարծում ենք, որ ուսանողների և դասախոսների փոխանակման ծրագրերը մեծապես կնպաստեն մեզանում կրթական զարգացումների գործընթացներին նաև եվրոպական կրթական տարածքում»,-ասաց ռեկտորի պաշտոնակատարը՝ ընդգծելով առաջին հանդիպման ճանաչողական բնույթը, հաջորդ հան-

➢2

Հայաստան

Դու իմ հետադարձ հասցեն ես միակ
Եվ իմ եզակի ճակատագիրը,
Իմ բաց երգերը, իմ վերքերը փակ,
Իմ հիշատակաց միակ Երկիրը...
Անկրկնակոշիկ Համապատմության
Սայթաքումները մեզ աղավաղել
Եվ թաց երգերս փակ վերքերիս մեջ
Սատանայաբար փորձել են թաղել:
Որպեսզի դառնամ թափառող ծրար՝
Չունենամ նույնիսկ հետադարձ
հասցե,
Բայց մենք վերստին փարվել ենք
իրար
Ու հուսաբանել՝ Տեր մի արասցե...
Դու իմ հետադարձ հասցեն ես միակ,
Իմ անկրկնելի ճակատագիրը,
Իմ բաց երգերը, իմ վերքերը փակ,
Իմ հիշատակաց միակ Երկիրը:

Հրաչյա ՍԱՐՈՒԽԱՆ

Կրթության ամենաբարձր արդյունքը հանդուրժողականությունն է:

ՀԵԼԼԵՆ ԱԴԱՄՍ ՔԵԼԼԵՐ

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՑՅԱԼ ՉԷ...

➢1 Ելույթ ունեցավ պատմական գիտությունների դոկտոր Սուրեն Սարգսյանը, որն արժևորեց տարբեր ժամանակներում հանդեսի գոյատևումն իրականացրած խմբագրի և խմբագրակազմի աշխատանքը:

Հոդվածագիր Վանիկ Վիրաբյանն իր մտահոգությունն արտահայտեց պատմական աղավաղումների շուրջ, որն էլ իր համար նախնիների ծննդավայրի՝ Չարդախլուի մասին պատմագիտական բնույթի հոդված գրելու առիթ է դարձել:

«Մարդը չպետք է մոռանա իր անցյալի, իր պատմության մասին: Ես փորձեցի մոռացումից փրկել պատմության մի բեկոր՝ իմ գյուղի պատմությունը»,-ամփոփեց Վ. Վիրաբյանը՝ շնորհակալություն հայտնելով խմբագրակազմին՝ երկուստեք արդյունավետ աշխատելու համար:

«Մեր երկու երկրները ճակատագրի առումով ընդհանրություններ ունեն,-ասաց բանասիրական գիտությունների դոկտոր,պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը:-Իզուր չէր, որ Մուշեղ Իշխանի ձեռքով Լիբանանը ճանաչվեց երկրորդ Հայաստան: Այսօրվա Հայաստանի մեջ մեր դերակատարությունն էական է: Մեզ համար մանկավարժական գործունեության խորհուրդը առավել կենսական նշանակություն ունի: Մենք համալսարանի 100-ամյակին ընդառաջ գնում ենք սևեռումով, բովանդակային ըմբռնումով»:

Բանախոսն արժևորեց հայագիտական հանդեսի գոյությունը Սփյուռքում, որն առաջնային է իր խորքով ու գիտական ճանաչողությամբ:

«Տարիներ շարունակ աշխատել եմ Հալեպում,-ասաց բանասիրական գիտությունների դկտոր, պրոֆեսոր Լալիկ Խաչատրյանը,-բայց պետք է նշեմ, որ Հայկազյան համալսարանն առաջնային է»:

Անդրադառնալով հուշագրի ստորագրմանը՝ բանախոսն ընդգծեց. «Դա միտված է ոչ միայն երկու բուհերի համագործակցությանը, այլև հայանպաստ համագործակցության նոր հորիզոններ են ծնվում»:

Լ. Խաչատրյանը փաստեց՝ այս հանդեսը «Բազմավեպի» հետ գալիս է հոգևոր կապ ստեղծելու մասնագետների և համալսարանների միջև, ապա ընդգծելով հայագիտական հանդեսի դերը՝ ելույթն ամփոփեց հենց հանդեսից մեջբերված տողերով՝ «Հայագիտությունը համապարփակ շտեմարան է, ազգային հիշողություն»:

«Սփյուռքի գաղթօջախների հանդեպ մենք պետք է դրսևորենք համակ ուշադրություն,-ասաց ՀՊՄՀ պրոֆեսոր Խաչատուր Ստեփանյանը՝ անդրադառնալով նաև հոբելյանական հատորի բովանդակությանը, որտեղ տեղ են գտնում նաև քաղաքական հոդվածներ՝ բացահայտելով և ընթերցողին ներկայացնելով ադրբեջանական կեղծիքը:

Պետք է ամեն ինչ անենք, որպեսզի հայաստանյան գիտական հանրույթը մեծապես ներկայացված լինի հանդեսում՝ Սփյուռքին իրազեկելով Հայաստանում կատարվող էական իրադարձությունները»:

Հայկազյան համալսարանին,Հայկազյան հայագիտական հանդեսին և Հայաստան-Սփյուռք կապերին իր ելույթում անդրադարձավ Անդրանիկ Տագեսյանը:

Հանդիպումն ամփոփվեց հանդեսի խմբագիր, Հայկազյան համալսարանի պրոֆեսոր Անդրանիկ Դաքեսյանի ելույթով. «Հայագիտությունը միայն դասական բանասիրությունը չէ, մենք այն հավատամքն ունենք, որ այն ավելի լայն հասկացություն է: Ուրախ եմ, որ հանդեսի շնորհանդեսը անց է կացվում Մանկավարժական համալսարանում և ուղեկցվում է համագործակցության հուշագրի ստորագրումով: Հայագիտությունը կամուրջ է հայ մտավորականների միջև: Վերջին տարիներին այդ կամուրջը վերածվեց ցանցակալումի ձգտումի, քանզի մեզ համար հայագիտությունը անցյալ չէ միայն, այլև ներկա»:

Խմբագիրն անդրադարձավ հանդեսում տպագրվող հոդվածների ձևակառուցվածքային և բովանդակային խնդիրներին՝ ամփոփելով, որ Հայկազյան հայագիտական հանդեսը հավաքական, միասնական ջանքերի արդյունք է:

Միլվա ԱՍՐՅԱՆ

ՄԱՏՆԱՆՇՎԵՑԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՈՒՂԻՆԵՐԸ

➢1 դիպմանն ակնկալելով առավել գործնական շփումներ:

Հայաստանում Շվեդիայի Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան պարոն Պատրիկ Սվենսոնը Հայաստանում արդեն երկրորդ բուհն է այցելում: Նա շնորհակալություն հայտնեց իր առաջին այցի և ջերմ ընդունելության համար և կարևորեց այն փաստերը, որ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարը ներկայացրեց իրեն, միաժամանակ իր գոհունակությունն արտահայտեց իր երկրի քաղաքակրթական նկարագրի մասին գեղեցիկ խոսքեր ասելու համար.«Ուրախ եմ, որ երկուստեք ունենք ընդհանուր հետաքրքրություններ, իսկ համալսարանի եկող տարվա հանդիսություններին մասնակցելու հրավերը պատիվ կլինի ինձ համար»:

Ինչ վերաբերում է հայ-շվեդական դիվանագիտական հարաբերություններին՝ դեսպանն ասաց, որ մտադիր են 2022 թվականին եվրոպական երկրների թիմով միասնական ձևաչափով նշել դիվանագիտական հարաբերությունների 30 տարին:

Դեսպան պարոն Պատրիկ Սվենսոնն իր հիացմունքն արտահայտեց Հայաստանի կրթական մակարդակի մասին՝ բարձր գնահատական տալով ոչ միայն մարդկանց բարեկրթությանն, այլև հետազոտական աշխատանքների արդյունավետ զարգացմանը, որոնք սերում են դեռևս խորհրդային տարիներից.«Դուք ունեք կրթական լավագույն ավանդույթներ, ինչը նկատելի է նաև դեսպանատան հայ աշխատակիցների հետ շփումներում, որոնց մեջ նաև կան ձեր բուհի շրջանավարտներ»:

Դեսպանը խոսք բացեց իր երկրի կրթական հաստատությունների հետ համագործակցելու հնարավորությունների մասին՝ որպես իրենց կրթական առաքելության մի մաս, ապա տեղեկացրեց, որ մեր ուսանողները տարբեր ծրագրերի շրջանակում կարող են օգտվել Շվեդիայի առաջարկած կրթաթոշակներից, և որ Շվեդական ինստիտուտը կարող է նպաստել այդ գործընթացներին:

Աշխատակազմի և միջազգային կապերի գծով պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը դեսպանին տեղեկացրեց միջազգային տարբեր ծրագրերում բուհի ներգրավվածությունը:

Դեսպանը ողջունեց մեր բուհի ղեկավարության նախաձեռնությունն ու հետաքրքրվածությունը Շվեդիայի հետ հարաբերություններն ընդլայնելու առումով, տեղեկացրեց Շվեդիայում սովորող հայ ուսանողների միության ստեղծման մասին, իսկ ռեկտորի պաշտոնակատար Աշոտ Խոեցյանը հույս հայտնեց, որ առաջիկա հանդիպումը կանցկացվի առավել գործնական հարթակում:

Հուշանվերների փոխանակումից հետո դեսպանն այցելեց համալսարանի պատմության թանգարան, ուր մեծ հետաքրքրությամբ ծանոթացավ ներկայացված ցուցանմուշներին:

Միլվա ԱՍՐՅԱՆ

ՀՊՄՀ ռեկտոր, պրոֆեսոր Աշոտ Խոեցյանը մասնակցեց «Շարունակական մանկավարժական կրթության ընթացիկ իրավիճակը և ինտեգրացիոն զարգացման հեռանկարները» թեմայով ԱՊՀ մանկավարժական բուհերի միջազգային առցանց ֆորումին:

ԱՊՀ մանկավարժական բուհերի միջազգային առցանց ֆորումում

ԱՊՀ կազմավորման 30-ամյակի շրջանակներում կազմակերպված ֆորումը մեկնարկեց մանկավարժական բուհերի համագործակցության փորձառության մասին պատմող տեսանյութով, որին հաջորդեց ԱՊՀ գործադիր կոմիտեի, ՌԴ լուսավորության նախարարության ողջույնի խոսքը:

ԱՊՀ մանկավարժական բուհերի հանրային խորհրդի նախագահ, Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր Ալեքսեյ Լուբկովը ֆորումում ներկայացրեց մանկավարժական ոլորտում կադրերի պատրաստման ինտեգրացիոն գործընթացների զարգացման ու խթանման մասին զեկույց:

Ֆորումի ընթացքում ելույթով հանդես եկավ նաև Հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտորի պաշտոնակատար, պրոֆեսոր Աշոտ Խոեցյանը, որը կարևորեց միջազգային մանկավարժական ֆորումի անցկացումը և հույս հայտնեց, որ այն կնպաստի ԵԱՏՄ երկների բուհական համակարգերի հետագա ինտեգրմանը՝ հիմնված փոխըմբռնման վրա:

«Հայաստանի Հանրապետության մանկավարժական կրթության համակարգի ընթացիկ իրավիճակը» թեմայով զեկույցում ռեկտորն ընդգծեց՝ գրաճանաչության ավելի քան 1600-ամյա պատմություն ունեցող Հայաստանի համար կրթությունը եղել և մնում է երկրի գիտամշակութային կյանքի առաջնային ուղղություններից:

Աշոտ Խոեցյանը նկատեց, որ նման կարևորություն ունեցել է նաև դպրոցը: Այն հայ ժողովրդի քաղաքական և մշակութային կյանքում եղել է գոյատևման երաշխիքն ու առաջընթացի լուրջ խթան:

«Հասարակության զարգացման ընթացիկ փուլում, կրթական համակարգի շրջանակներում, տեղի են ունենում որոշակի հարացուցային փոփոխություններ: Կրթության փիլիսոփայությունը և մանկավարժությունը ևս ենթարկվում են հումանիտար և մարդաբանական փոփոխությունների, որոնք ենթադրում են ինչպես մարդու, այնպես էլ մանկավարժական կրթության ուսումնասիրման նոր մեթոդաբանություն»,-նշեց պրոֆեսորը:

ՀՊՄՀ ռեկտորի պաշտոնակատարն ընդգծեց նաև՝ սկզբունքորեն կարևոր է, որ գլոբալացմանն առնչվող գործընթացներն ոչ թե հակադրվեն մանկավարժական կրթության ազգային համակարգին, այլ իրականացվեն փոխազդեցության և փոխլրացման սկզբունքով:

Աշոտ Խոեցյանն իր զեկույցում անդրադարձավ նաև կրթական ոլորտի կառուցվածքին, մանկավարժների կարգավիճակին, կրթական համակարգին անհրաժեշտ մանկավարժական կադրերի պատրաստման գործընթացի բովանդակությանն ու տեխնոլոգիաներին, մանկավարժական կրթական ծրագրերի կառուցվածքին:

Իր ելույթի ավարտին նա ընդգծեց նորարական վեկտորի կարևորությունը.«Այսօր նորարարությունները հասարակություններում ընթացող մշակութային գործընթացների հիմնական ցուցչի դեր են կատարում, իսկ սոցիալական համակարգերի նորարարական ներուժի զարգացումը ռազմավարական նպատակի կարգավիճակ են ձեռք բերել»:

«Շարունակական մանկավարժական կրթության ընթացիկ իրավիճակը և ինտեգրացիոն զարգացման հեռանկարները» թեմայով ԱՊՀ մանկավարժական բուհերի միջազգային ֆորումին ելույթներով հանդես եկան նաև Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի, Մոլդովայի, Յարոսլավի, Տաջիկստանի, Տաշքենդի մանկավարժական բուհերի ռեկտորները:

Մարիա ԱՂԵԿՅԱՆ

Անդրանիկ Դաքեսյանի դասախոսությունը

Մանկավարժական համալսարանում էր Լիբանանահայ պատվիրակությունը: Նոյեմբերի 26-ին Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դասախոսների և ուսանողների համար «Լիբանանի հայերը. անընդհատ հարմարում տագնապների շարքին 1920-2020թթ.» խորագրով հանրային դասախոսությամբ հանդես եկավ ճանաչված պատմաբան,

պրոֆեսոր, Հայկազեան հայագիտական հանդեսի գլխավոր խմբագիր Անդրանիկ Դաքեսյանը:

Պրոֆեսորը հանգամանորեն ներկայացրեց լիբանանահայերի կյանքի պատմությունը՝ համայնքների ձևավորումից, գործունեությունից մինչև տարբեր մարտահրավերներին դիմակայելու հնարները:

Անդրադառնալով լիբանանահայերի պատմության նախաեղեռնյան և հետեղեռնյան շրջաններին (1921 թ.), Լիբանանի նոր մարտահրավերներին և նրանց ազդեցությանը լիբանանահայերի վրա, բանախոսը ներկայացրեց Լեռնալիբանանի ինքնավարության ստեղծումն ու լիբանանահայերին՝ որպես խաղաղություն վարողներ:

Տիգրան Մեծի ժամանակների քարտեզի վրա նա մատնանշեց Միջերկրական ծովեզրյա այն տարածքները, որոնց վրա հաստատվեցին հիմնականում Կիլիկիայից գաղթած հայերը և թե ինչպես Լեռնային Լիբանանը դարձավ փախստականների հաստատման վայր:

Պրոֆեսորը ներկայացրեց Լիբանանի հայ համայնքների տնտեսական, հոգևոր կենտրոնների, մշակութային կյանքն ու պատմական այլ կարևոր իրադարձություններ ևս: Անդրանիկ Դաքեսյանը խոսեց 1975-1990-ականներին Լիբանանի քաղաքացիական պատերազմի և դրան հաջորդած մի շարք իրադարձությունների մասին, որոնք մեծապես ազդեցին Լիբանանի հայ համայնքների կյանքի ու գործունեության վրա:

Բանախոսը հատուկ ընդգծեց, որ Լիբանանը նշանավոր դարձավ իր որբատներով, որոնք գոյատևեցին մինչև 1920-ական թվականները, նյութական դժվարությունների պատճառով բազմաթիվ որբատներից մնացին երկուսը: 1920-ականները, սակայն, դարձան հայ ազգի վերակերտման տարիներ: Որբերը սովորեցին արհեստներ՝ կոշկակարությունից մինչև գորգագործություն, որպեսզի հաղթահարեն տնտեսական ծանր կացությունը: Զուգահեռ վերելք ապրեց նաև մշակույթը՝ ստեղծվեցին երգչախմբեր, թատրոն, հրատարակվեցին Լիբանան, Փիինիկ, Զարթօնք, վերանվանված Ազդակ օրաթերթերը: Կոմիտասի լավագույն աշակերտներից Բարսեղ Կանաչյանի ջանքերով Լիբանանում վերելք ապրեց նաև երգչախմբային արվեստը:

Պրոֆեսորը տեղին շեշտադրեց. «Մենք ցեղասպանություն տեսած ժողովուրդ ենք, դրանից այն կողմ ողբերգություն չկա, իմ հարազատներն էլ ցեղասպանության զոհ դարձան…Բայց մենք կարողացանք նորեն ոտքի կանգնել»:

Լիբանանը պետություն հռչակվեց 1926 թվականի մայիսի 1-ին: Այն հիմնված էր համայնքների վրա, ինչը շահեկան էր լիբանանահայության համար: Սակայն Լիբանանի պատմությունը իրարամերժ իրադարձությունների մի հարահոս շղթա էր՝ միջհամայնքային, ապա ներհամայնքային պայքարի դրվագներով, որը մշտապես ուղեկցվել է հայերի ներգաղթով և արտագաղթով: Առաջին հայրենադարձության տարում Խորհրդային Հայաստան վերադարձավ շուրջ 20 հազար հայ: Իսկ 1960-ականներին Լիբանանում հայերի թիվը հասնում էր 100 հազարի: Շուրջ 12 հազար որբերի աշխատանքի շնորհիվ համայնքի տնտեսական վիճակը բարելավվեց:

1975-1990 թթ. պատերազմը շատ բան փոխեց Լիբանանի կյանքում: Հայերը ձեռնպահ մնացին՝ չմասնակցելով այդ պատերազմին, սակայն տնտեսական ու նյութական վնասներն իրենց ազդեցությունը թողեցին բոլոր համայնքների՝ այդ թվում և հայերի վրա: Պատերազմից առաջ գոյություն ունեցող 60 դպրոցներից մնացին 20-ը. ժողովրդագրության անկումը, համաշխարհայնացման (գլոբալիզացիայի) հետևանքները տարբեր կերպ ազդեցին երկրի ու մարդկանց կյանքի վրա:

Անդրանիկ Դաքեսյանն իր դասախոսությունն ամփոփեց 1990-2010 թվականներին տեղի ունեցած պատմական կարևոր անցքերի մեկնաբանմամբ և Լիբանանի անորոշության պատկերով, որին զուգահեռվեցին Հայաստանի անկախացումը, Ղարաբաղի ինքնորոշման համար պայքարը: Թերևս Լիբանանի այս անորոշ վիճակի արդյունքում Բեյրութը և Միջին Արևելքը դադարեցին լինել Սփյուռքի կենտրոն:

Սիլվա ԱՄՐՅԱՆ

ՇԱԽՄԱՏԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Նոյեմբերի 21-ին ամփոփվեցին «Շախմատը կրթության մեջ» ՖԻԴԵ-ի հանձնաժողովի և ՀՊՄՀ «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի նախաձեռնությամբ կազմակերպված «Շախմատը կրթության մեջ» խորագրով միջազգային գիտաժողովի աշխատանքները:

Հեռավար հաղորդակցության Zoom հարթակում անցկացված գիտաժողովին մասնակցում էր աշխարհի շուրջ 100 երկրի 4500 ներկայացուցիչ: Մասնակիցները երկօրյա գիտաժողովում քննարկեցին շախմատի ուսուցման հիմնախնդիրները՝ նախադպրոցական հաստատություններում, հիմնական և ավագ դպրոցներում, ինչպես նաև բարձրագույն կրթության ոլորտում:

Գիտաժողովին մասնակցում էին Շախմատի համաշխարհային ֆեդերացիայի (ՖԻԴԵ) նախագահ Արկադի Դվորկովիչը, փոխնագահները, գործադիր տնօրենները, աշխարհահռչակ գրոսմայստեր Վիշվանաթան Անանդը, ինչպես նաև կրթական շախմատի ոլորտում համաշխարհային ճանաչում ունեցող միջազգային փորձագետներ:

Գիտաժողովին մասնակցում էին նաև ՀՊՄՀ ռեկտորի պաշտոնակատար, պրոֆեսոր Աշոտ Խոեցյանը, ուսումնագիտական գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանն ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտոր Վահե Կիրակոսյանը:

Հայաստանյան թիմից զեկույցներով հանդես եկան ՀՊՄՀ «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի աշխատակիցները՝ ինստիտուտի գիտական ծրագրի ղեկավար Վահան Սարգսյանը, ավագ գիտաշխատողներ Սերոբ Խաչատրյանն ու Թամարա Սարգսյանը:

Վահան Սարգսյանը ներկայացրեց 2021 թվականին ինստիտուտի գիտաշխատողների իրականացրած համահանրապետական հետազոտության որոշ արդյունքներ, ըստ որի՝ շախմատային կրթության արդյունավետության համար կարևոր նշանակություն ունեն սովորողների շախմատային նախագիտելիքները, իսկ տնային առաջադրանքների լուծումը կամ ծնողների միջամտությունը բացասաբար են ազդել արդյունքների վրա:

Հետաքրքրական էր նաև ուսուցիչների փորձի և սովորողների ուսուցման միջև արդյունավետության անմիջական կապը. լավագույն արդյունք արձանագրվել է 10-ից ավելի, ապա 1-5, իսկ երրորդ տեղում՝ 5-10 տարվա մասնագիտական փորձ ունեցողների մոտ:

Սերոբ Խաչատրյանն իր ելույթում անդրադարձավ «Շախմատ» առարկայի չափորոշիչների մշակմանը, դրանց գիտական հիմնավորման հարցերին, ընդգծեց կրթական աստիճանակարգերի դերը նմանօրինակ գործընթացներում: Թամարա Սարգսյանն էլ ներկայացրեց հայաստանյան թիմի մշակած՝ շախմատի ուսուցիչներ վերապատրաստող մասնագետների վերապատրաստման մասնագիտական զարգացման դասընթացի գիտատեսական հիմքերը:

Ի դեպ, տվյալ դասընթացը, որպես որակի գնահատման չափանիշ, ուղենշային է լինելու նաև Շախմատի միջազգային ֆեդերացիայի (ՖԻԴԵ) համար:

«Շախմատը կրթության մեջ» խորագրով միջազգային երկօրյա գիտաժողովում հետաքրքրական էին նաև օտարերկրացի մասնակիցների՝ ռուս հոգեբան, պրոֆեսոր Վ. Զարեցկու, իտալացի պրոֆեսոր Ռ. Տրինչերոյի, Կ. Սաուրինայի, Լ. Գարսիայի և ուրիշների զեկույցները:

Երկօրյա գիտաժողովի ընթացքում կազմակերպվեց նաև վիրտուալ կլոր սեղան. ներկայացվող զեկուցումների վերաբերյալ ծավալվեց շահագրգիռ քննարկում, եղավ հարց ու պատասխան:

Գիտաժողովի փակմանը ելույթ ունեցան Շախմատի միջազգային ֆեդերացիայի (ՖԻԴԵ) հանձնաժողովի քարտուղար Քեվին Օ'Քոննելը և ՖԻԴԵ-ի գործադիր տնօրեն Դանա Ռեզնիս Օզոլան, որոնք կարևորեցին գիտաժողովի անցկացումը, նաև հույս հայտնեցին, որ այն կլինի շարունակական:

Վերջիններս ընդգծեցին գիտաժողովի բացառիկությունը. դրանում համատեղվել էին մի շարք նորարարություններ՝ երկլեզու հաղորդակցում, առցանց հարթակ, կրթական շախմատի միջգիտակարգային բնույթ:

Մարին ԱՂԵԿՅԱՆ

Տարին հոբելյանական է Դմիտրի Կեսայանցի համար՝ նա կդառնար 90 տարեկան

«Հավատը, որ իրավացի ես, այն ուժն է, որը քեզ մղում է առաջ, օգնում դժվարին րոպեներին, ոգևորում, գոտեպնդում, որպեսզի նախքան գործն ավարտելը դուրս չգաս կենսական անհրաժեշտություն դարձած հունից, չմնաս կես ճանապարհին:

Սակայն հավատը նույնպես աստիճանաբար թուլանում է և կորցնում իր ուժը: Մինչդեռ ֆիլմը հարկավոր է ավարտել»:

Դմիտրի ԿԵՍԱՅԱՆՑ



Մանկավարժ, կինոռեժիսոր, սցենարիստ, փաստագրական, կարճամետրաժ, լիամետրաժ և այլ ժանրերի ֆիլմերի հեղինակ Դմիտրի Կեսայանցը ծնվել է 1931 թվականին Երևանում՝ Կարսից արտագաղթած ազնվականների ընտանիքում: Հորական կողմի նախնիները ստիպված էին իրենց իրական Բագրատունի ազգանունը փոխել Կեսայանցի, որպեսզի խուսափեն բոլշևիկների ճնշումներից: Այնուամենայնիվ ԽՍՀՄ ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատը (ՆԳԺԿ) իմացավ ընտանիքի ազնվական արմատների մասին, և երբ Դմիտրին 12 տարեկան էր, ընտանիքն աքսորվեց Սիբիր, ուր անցկացրել է հինգ տարի: Այդ տարիների մասին հիշողությունները տասնամյակներ անց վերածվելու էին սցենարի՝ ստանալով «Աստծո պատիժ» որակումը:

Կեսայանները ինը երեխա են ունեցել: Գաղթի ճանապարհին չորսին կորցրել են: Ռազմիկը (Դմիտրի անունը նա ստացել է աքսորում, այնտեղ շատերն էին անվանափոխվում, քանի որ ռուսները դժվարանում էին արտաբերել հայկական անունները) աքսորավայրում մի տարի անց սովորում է տրակտորիստների դպրոցում և աշխատանքի անցնում կոլտնտեսությունում: Բայց դեռ պատանեկան տարիներին սկսված ծանր ֆիզիկական աշխատանքը բնավ չի մարում նրա մեջ ուսման ու արվեստի ծարավը: 1949 թ. Կեսայանների աքսորի ժամկետը լրանում է, և ընտանիքը վերադառնում է հայրենիք: Այնուհետև Դմիտրի Կեսայանցը երեք տարի ծառայում է սովետական բանակում և զորացրվելուց հետո սկսում է ջանասիրաբար հետ բերել ուսման կորցրած տարիները: Քանի որ նա մտադիր էր Մոսկվա գնալ սովորելու, հասկանում է, որ պետք է լավ տիրապետի ռուսերենին: Ուստի որոշում է նախ սովորել որևէ հումանիտար հաստատությունում և 1954 թ. ընդունվում է Օստրովսկու անվան ռուսական մանկավարժական ուսումնարան: 1950 թվականին Դմիտրի Կեսայանցն ավարտում է մանկավարժական ուսումնարանը, իսկ 1954 թվականին դառնում Պատանի հանդիսատեսի թատրոնի դերասան: 1957 թվականին ընդունվում է ՎԳԻԿ-ի ռեժիսուրայի ֆակուլտետ՝ Գրիգորի Կոզինցևի արվեստանոց: Ինստիտուտն ավարտելուց հետո վերադառնում է Երևան և մինչ կյանքի վերջն աշխատում «Հայֆիլմ» կինոստուդիայում՝ միաժամանակ դասավանդելով Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում:

Ուսումնարանում Դմիտրի Կեսայանցի կյանքում կարևոր դեր է խաղացել նրա ուսուցիչներից մեկը՝ Ալեքսանդր Սերգեևիչը, որը մեծ վաստակ ուներ Դմիտրիի մասնագիտական կողմնորոշման և գիտելիքների ձեռքբերման գործում:

Կեսայանցի առաջին իսկ ֆիլմերը բախվում են խորհրդային սուր գրաքննությանը: «Ավդոյի մեքենան» կարճամետրաժ ֆիլմը խիստ կրճատվեց և արդյունքում չցուցադրվեց: Հաջորդ՝ «Մարդն Օլիմպոսից» ֆիլմը, ցուցադրվեց սահմանափակ թվով կինոթատրոններում: Տարիներ շարունակ գրաքննությունը մերժում էր նրա սցենարները և ֆիլմերը: Սակայն չնայած պրոֆեսիոնալ բոլոր դժվարություններին՝ Կեսայանցին հաջողվում է նկարահանել մի շարք ֆիլմեր, որոնք դասվում են հայկական կինեմատոգրաֆի դասական գործերի շարքին: Նրանց թվում էին՝ «Տերն ու ծառան» (1962), «Զինվորն ու փիղը» (1978), «Տանիքի ավտոմեքենան» (1980), «Հեծյալը, որին սպասում են» (1984), «Անիծվածները» (1991): Վերջին ֆիլմը հայկական կինեմատոգրաֆի պատմության մեջ դարձավ ամենադիտվածը:

«Լինում է, որ մի գեղեցիկ օր մարդը որոշում է կինոռեժիսոր դառնալ ու դառնում է: Բայց ես կինեմատոգրաֆ եմ եկել ոլոր-մոլոր ճանապարհով: Սկսել եմ շատ սովորական՝ ոտանավորներից: Ու թեպետ սկսնակ բանաստեղծների դպրոցական օլիմպիադայում դրանք լավագույնը ճանաչվեցին, մեկ-երկու տարի անց սկսեցի արձակ գրել: Տասնութ տարեկանում արդեն երկու վիպակ ունեի, երեք պատմվածք, «օրագիր»՝ չորս ընդհանուր տետր և... կինոսցենար: Ինչո՞ւ կինոսցենար. մինչև հիմա չեմ հասկանում:

Համամիութանական կինոյի ինստիտուտ (ՎԳԻԿ) ընդունվեցի առաջին իսկ փորձով և առանց ուղեգրի: Բախտս բերեց: Հայտնվեցի Գրիգորի Կոզինցևի արվեստանոցում: Հինգ տարվա շփումը նրա հետ օգնեց ինձ վերջնականապես ձևակերպելու իմ վերաբերմունքն իրերին, մարդկանց ու երևույթներին, սանձահարելու իմ զգացմունքները և ծառայեցնելու դրանք գեղարվեստական խնդրին, վերացարկված աշխարհընկալումներն արտահայտելու որոշակի պլաստիկ պատկերներով: Տարերայնության պաթետիկան և մարդկային նկարագրի պարադոքսները. ահա թե ինչն է միշտ հետաքրքրել ինձ: Վերջին հաշվով աշխարհն իրոք առաջ են տանում խենթերն ու դոնկիխոտները... Դա անկասկած իմ մասին է...»,- ասել է Դմիտրի Կեսայանցը:

Լիլիթ ՍԵՓՅԱՆ
ՀՊՄՀ գիտական թանգարանի ավագ գիտաշխատող

44 ՕՐ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԱՐՍԱՓՆԵՐԻ ՄԵՋ...

«Այս կյանքում ուղղակի բաներ չեն լինում, պետք է ամեն ինչին լուրջ վերաբերվես»,-պատմում է 44-օրյա պատերազմի մասնակից Համլետ Հակոբյանը: 2020 թվականի հունվարի 24-ին նա զորակոչվել է բանակ, ծառայության անցել էջմիածնի Ականազերծման գումարտակում, 6 ամիսը լրանալուց հետո տեղափոխվել է Արցախ՝ Զարինբախ: Ծառայությունը մինչև սեպտեմբերի 27-ն անցել է խաղաղ պայմաններում: Իմացել են, որ պատերազմ է սկսվելու սեպտեմբերի 27-ին, մտածել են այդ ուղղությամբ, բայց լուրջ չեն վերաբերվել: Սեպտեմբերի 26-ին գնացել են քաղաք, ծննդյան օր նշելու, իսկ առավոտյան վերադառնալուն պես արդեն պատերազմը սկսված էր:

Ավագ սակրավոր լինելով և տագնապի ձայները լսելով՝ նա արագ արթնացրել է տղաներին ու արդեն նստեցման շրջանում են եղել Նռգի գյուղում (նույն ինքը՝ Մալու-Բալու): Առաջին օրը չեն գիտակցել՝ ինչ է կատարվում. համեմատաբար թեթև է եղել: Պատերազմի ընթացքում ամենադաժանը եղել է ընկերոջ ՝ Սևակ Ալեքսանյանի զոհվելու օրը: Չէր հասկանում ո՛չ դժվարություն, ո՛չ էլ ցավ, մինչև չզգաց սեփական մաշկի վրա:

«Դու գիտակցում ես, որ չկա տվյալ մարդը, մեզ հետ չի ու անբացատրելի զգացումներ ու ապրումներ ես ունենում: Ե՛վ լաց լինել, և՛ ժպտալ: Ժպտա՞լ... Այո՛, ժպտալ... Անբացատրելի ու տարբերվող ժպիտ, որի տակ թաքնված էին ցավ ու կարոտ, լաց ու տխրություն: Ժպիտ, որը երկնքին նայելիս էր հայտնվում: Աչքերս փակելուն պես երկնքում նշմարվում էր զոհված ընկերոջս պատկերը, որն էլ ստիպում էր ինձ ժպտալ»,-ասում է Համլետը:

Միշտ մտածել է մոր աչքերին նայելու մասին,

մնացածը տվյալ պահին երկրորդական է եղել: 27 հոգի են եղել, միշտ մտածել են իրար հետ անցկացրած ամեն վայրկյանի մասին, համախմբված են եղել, իրար քաջալերել են՝ չվախենալ ոչ մի բանից: Միակ մխիթարանքն այդ ժամանակ հիշողությունն էր: Ինչպես բոլորը, Համլետը նույնպես ունեցել է մոտիկ ընկերներ, ու որոշել էին պատերազմի ավարտից հետո, ողջ մնալու դեպքում, երեքով, 6 ամիսը մեկ գնալ Արցախի այն վայրերը, որտեղ լավ ու վատ օրեր են ապրել:

Տեսնում էին մահեր, բայց դա նրանց չէր խանգարում երազել, պատկերացնել իրենց հարսանիքը, որի ժամանակ երեքն էլ պետք է ներկա լինեին: Ու ամենակարևորը՝ իրենք իրար խոսք են տվել՝ եթե պատերազմը նորից կրկնվի, առաջիններից են լինելու, որ մեկնելու են պատերազմի դաշտ: Զոհվելու մասին Համլետը չի մտածել, տարօրինակ կթվա, բայց նրա համար այդ օրերին սովորական բան էր դարձել զոհվելը. «-Կյանքի պատկերն է, կյանքի գործոնը: Դու ապրում ես, բայց չգիտես 10 րոպե հետո դու կանգնա՞ծ կլինես, թե՞ պառկած, անկանխատեսելի է, չես կարող ասել երբ կանգ կառնի սիրտդ: Դրա համար էլ չեմ վախեցել մահից, որովհետև չգիտեմ դա երբ կլինի: Քանի հայը կա, պատերազմներ լինելու են»:

Փաստաթղթի ստորագրման մասին իմանալով՝ ցավ է ապրել. օգտագործված է զգացել իրեն և բոլոր այն տղերքին, որոնք այդ հողի վրա իրենց արյամբ սահման գծեցին: «Մարդիկ պետք է իրար շատ սիրեն, չչարանան այս կյանքի հանդեպ, որովհետև չար մարդը շատ վատ բաների է պատրաստ: Եթե չլինեին չար մարդիկ՝ պատերազմներ ևս չէին լինի: Աշխարհում յուրաքանչյուր մարդու առագաստանավ թող միշտ խաղաղ օվկիանոսի ալիքների մեջ նավարկի ու երբեք չհանդիպի փոթորիկների»,- եզրափակեց Համլետ Հակոբյանը, ով սեփական աչքերով է տեսել ու մարմնով զգացել պատերազմն ու նրա սարսափները:

Վիոլ ՈՍԿԱՆՅԱՆ
Կուլտուրայի ֆակուլտետ, հեռուստալրագրության բաժնի 2-րդ կուրսի ուսանող

Ներկայացվեց ARLOOPA հավելվածը

Ժամանակակացից տեխնոլոգիաների դարում միայն կարդալը բավարար չէ ուսումնական նյութը յուրացնելու համար, անհրաժեշտ է ժանամակին համընթաց ինտեգրվել թվային աշխարհին՝ օգտագործելով նրա ընձեռած հնարավորությունները:

Նոյեմբերի 29-ին Մանկավարժական համալսարանի Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետում հյուրընկալվել էին «Լրացված իրականություն» և «Վիրտուալ իրականություն» տեխնոլոգիաների վրա հիմնված հավելվածների և խաղերի ստեղծմամբ զբաղվող ARLOOPA Inc.-ի ներկայացուցիչները:

ARLOOPA հավելվածի նախագծի հեղինակ Արմինե Ղազարյանը և հաճախորդների սպասարկման մասնագետ Արուսիկ Դադիյանը դասախոսներին և ուսանողներին ներկայացրին նոր հավելվածի միջոցով ուսումնական գործընթացը ինտերակտիվ միջավայրում ներգրավելու հնարավորությունները:

ARLOOPA հավելվածը բազմաֆունկցիոնալ հավելված է՝ հասանելի 10 լեզվով, որը կիրառվում է երեք տարբեր տեխնոլոգիաների միջոցով՝ մարկերով, առանց մարկերի, լոկացիայով:

Նոր տեխնոլոգիաների կիրառմամբ ուսանողների համար առավել մատչելի, հետաքրքիր ու գրավիչ կդառնա ուսումնական այս կամ այն առարկան և դասանյութերը յուրացնելը, հավելվածը հնարավորություն կտա դասերն անցկացնել եռաչափ թվային տարբերակով՝ դասագրքերը հավելել թվային բովանդակությամբ: Ուսանողը կարող է ոչ միայն կարդալ, այլև ներգրավվել ինտերակտիվ միջավայրում: Թվային եռաչափ տեխնոլոգիաները կարող են կիրառել անիմացիաների և տեսահոլովակների միջոցով:

«AR LOOPA-ն իրականության լրացման հավելված է, որը հնարավորություն է տալիս մեր ունեցած արժեկրթական նյութերը հավելել նորագույն ինֆորմացիայով, ինտերակտիվ հետաքրքիր կոնտենտ ստեղծել, որը ուսանողների համար ավելի հետաքրքիր կլինի:

Եթե նախկինում ուսանողները կարդում էին դասագիրքը, լավագույն դեպքում մի քանի նկար նայում՝ բավարարվելով այդքանով, այժմ կարող են, օրինակ, քիմիայի փորձը սկանավորել և նայել, սրտի կառուցվածքը բացատրելիս ուսուցիչը կարող է մոտեցնել հեռախոսը, որը կբերի սրտի եռաչափ մոդելը՝ բոլոր մանրամասներով, այդպես և մարմնի կառուցվածքը, արյունատար անոթները, ատամի կառուցվածքը և այլն:

Հավելվածն այս պահին 3,5 միլիոն ներբեռնումներ ունի ամբողջ աշխարհում, մասնավորապես Հնդկաստանի, Նոր Զելանդիայի և այլ երկրների դպրոցներում: Դա գործիք է, որը թույլ է տալիս ցանկացած մարդու՝ առանց ծրագրավորման գիտելիքների, ինքնուրույն իր կոնտեկտը ստեղծել: Ցանկացած ուսուցիչ

իր նորարարական մտքի շնորհիվ կարող է ստեղծել մի այնպիսի ծրագիր, որը կօգտագործի իր դասերի ընթացքում: Դա կլինի ունիկալ և միայն իրենը, որով ինքը կտարբերվի մյուսներից»,-ասաց հաճախորդների սպասարկման մասնագետ Ա. Դադիյանը:

Հանդիպման նախաձեռնող, աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս Վարդուհի Հովհաննիսյանն էլ վստահ է՝ հավելվածը թույլ կտա գործնական սեմինարների և դասախոսությունների ընթացքում լայնորեն կիրառել նորագույն տեխնոլոգիաները: Հավելվածի հնարավորություններն ու առաջին փորձը կիրառել են դեռևս նախորդ շաբաթ՝ «Երկրաբանության գեոդինամիկ պրոցեսները» դասի ընթացքում, «Հրաբուխներ» թեման ուսումնասիրելիս ստացել են գործող հրաբխի 3D մոդել, իսկ դինոզավրերը լսարանում «շրջեցին» հնեաշխարհագրության, կենսաաշխարհագրության դասընթացի շրջանակներում.«ARLOOPA Inc.-ը արդեն իսկ առաջարկել է Մանկավարժական համալսարանի տարածքում 50 մետր շառավղով տեղադրել կետեր՝ հավելվածի քարտեզն առավել հասանելի դարձնելու համար: Այն հնարավորություն կտա, որ ուսանողը պասիվ դիտորդից ներգրավվի և ինքնուրույն ստեղծի 3D բովանդակությամբ նյութեր»:

Առցանց ցուցահանդես՝ «Աշնանային գույներ»

Սկզբնական կրթության ֆակուլտետի ուսանողները նոյեմբերի 18-ին հանդես եկան իրենց ստեղծագործական աշխատանքների առցանց ցուցահանդես-ստուգատեսով՝ «Աշնանային գույներ» խորագրով: Ցուցահանդեսի նախաձեռնությունը մանկավարժական գիտությունների թեկնածու, կերպարվեստի ամբիոնի դոցենտ Ժաննա Խաչատրյանինն էր, որը դասապրոցեսները պարբերաբար ամփոփում է նման ձեռնարկներով՝ ոգևորելով ուսանողներին՝ նրանց ստեղծագործական հմտությունների և երևակայության արդյունքները տեսանելի դարձնելով շատերին:

Ցուցահանդեսում ներկայացվել էին Սկզբնական կրթության ֆակուլտետի առկա և հեռակա ուսուցման համակարգերի «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրերի տարբեր կուրսերի ուսանողների՝ «Կերպարվեստի դասավանդման մեթոդիկա» առարկայի շրջանակներում ստեղծված աշխատանքները: Ուսանողները ներկայացրել էին բնանկարներ, նատյուրմորտներ, ծեփակերտման, դեկորատիվ կիրառական արվեստի աշխատանքներ, որոնք մեծ հետաքրքրություն էին առաջացրել և գրավել իրենց մտահղացմամբ և յուրահատուկ գույներով:

Սկզբնական կրթության ֆակուլտետի դեկան Հեղինե Խաչատրյանը նշեց, որ ֆակուլտետում նման միջոցառումները ավանդույթ են դարձել, և այս մեկն էլ բացառություն չէր:

Ցուցահանդեսին այս անգամ իրենց ստեղծագործական աշխատանքներով մասնակցելու ցանկություն էին հայտնել նաև ֆակուլտետի շրջանավարտներից, ինչը խոսում է համալսարանի հետ նրանց հետադարձ կապի մասին:

«Կերպարվեստի դասավանդման մեթոդիկա» առարկայի շրջանակներում ծնվել են բազմաթիվ աշխատանքներ, որոնք կատարվել են ինչպես հեռավար հարթակում գործնական պարապմունքների ժամանակ, այնպես էլ լսարանում կատարված աշխատանքների համար նախատեսված ժամերին:

3-րդ կուրսի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» հեռակա բաժնի ուսանողուհի Զարուհի Չախոյանը նշում է, որ ներկայում կերպարվեստն իր համար դարձել է սիրելի գործունեության ձև, որի միջոցով կարողանում է դրսևորվել, ներկայացնել սեփական մտքերը: «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտությամբ 3-րդ կուրսի ուսանողուհի Զուլիետա Մանուկյանը մեծ սիրով կատարել է ոչ միայն իր ստեղծագործական աշխատանքները, այլև ակտիվ մասնակցություն է ցուցաբերել ցուցահանդեսի աշխատանքների ձևավորման և համակարգման գործընթացին:

Պետք է նշել, որ ժամանակի պահանջով, կյանքի տարբեր կողմերի սոցիալական բազում դժվարությունները, անձի հուզական վիճակի հաղթահարման, կարգավորման միտումը արվեստի միջոցով եզակի հնարավորություն է ուսանողների համար, ինչը նաև իրականացվում է ուսումնական «Կերպարվեստի դասավանդման մեթոդիկա» առարկայի գործնական դասաժամերին:

Ֆակուլտետի ուսանողներն ակտիվորեն ընդգրկվում են ստեղծագործական գործունեության մեջ՝ իրենց երազանքները, մտորումները, հույզերը, զգացմունքներն ու մտքի թռիչքները կերպարվեստին հատուկ լեզվով ներկայացնելու և փոխանցելու դիտորդին:

«Աշնանային գույներ» առցանց ցուցահանդեսի աշխատանքներն ուղեկցվում էին հայ բանաստեղծների և աշխարհահռչակ հայ երգահանների ստեղծագործություններով:

Ապագա մանկավարժների համար երեխաների հետ աշխատելու հիանալի միջոց է կերպարվեստը՝ իր տեսակներով լավագույն հնարավորություն՝ բացահայտելու երեխայի յուրօրինակ անհատականությունը և ներաշխարհը, արտահայտելու սեփական տեսակետը, երեխայի «Ես»-ի արտահայտման ու դրսևորման յուրահատուկ ձև: Հենց դրան էլ միտված են նման ցուցահանդեսները, որոնք ոչ միայն գեղագիտական հաճույք են պատճառում դիտողին, այլև զարգացնում ու կրթում են ուսանողների ստեղծագործական միտքը:



Նարինե Բաղդասարյան
Սկզբնական կրթության շրջանավարտ



Մարինե Հախվերդյան
Սկզբնական կրթության ֆակուլտետ
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա, հեռակա 3-րդ կուրս

Մերի մկրտչյան
Սկզբնական կրթություն ֆակուլտետ
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա 3րդ կուրս

Ապագա լրագրողի էջ

Երիտասարդ տարիքում ստեղծել բիզնես ծրագիր, զարգանալ և ինքնակրթվել: Իրենց փորձը կիսելու, հաջողությունների մասին պատմելու և բիզնես-սեմինար անցկացնելու նպատակով Մանկավարժական համալսարան էին հրավիրվել «Due x» ընկերության հիմնադիր և տնօրեն Դավիթ Յուզբաշյանը և «Rooqet» ընկերության համահիմնադիր Էրիկ Խաչատրյանը:

Դավիթ Յուզբաշյանը պատմեց՝ ծնվել ու ապրում է Գյումրիում: Իր գործունեությունը ՀՀ երկրորդ մայրաքաղաքում է ծավալում, քանզի իր համար շատ կարևոր է մարզերի զարգացվածության խնդիրը:

«Ամեն ինչ սկսվեց 15 տարեկանում, երբ ավարտեցի «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը: Ծրագրավորող ընկերոջս հետ որոշեցինք թիմ հավաքել և կայքեր ստեղծել՝վաճառելու նպատակով: Ժամանակի ընթացքում թիմեր շատ փոխեցի. կարևոր էր, որ թիմում ընդգրկված լինեին ծրագրավորող, դիզայներ և մեկն, ով կշփվեր հաճախորդների հետ»,-պատմեց երիտասարդ գործարարը:

Աշխատելու և հաջողությունների հասնելու մի քանի նախադրյալներ նշեց՝ ինքնակրթությունը, օրական 90-100 ժամ աշխատելը, նոր ծանոթություններ հաստատելը, զբոսնելը, երաժշտություն լսելն ու նոր մասնագիտություններ ուսումնասիրելը:

«Due x» ընկերության հիմնադիրը նշեց նաև, որ ընկերությունը մինչև անգամ փակվելու խնդրի առաջ է կանգնել և մի քանի անգամ սնանկացման եզրին է եղել, սակայն դա չի խանգարել առաջ շարժվել՝ հավաքել նոր թիմ և ավելի մոտիվացվել:

Երիտասարդ գործարարի ընկերությունն այսօր համագործակցում է մի շարք տեղական և արտասահմանյան խոշոր կազմակերպությունների հետ, որոնցից են «Nissan»-ը, «Adidas»-ը, «Disney»-ը, «Իդեալ» համակարգը և այլ կազմակերպություններ:

Դավիթ Յուզբաշյանը խոսեց նաև սոցիալական կայքերով գումար վաստակելու հնարավորության և անձնական կապերն ավելի նպատակահարմար օգտագործելու՝ թիրախային գովազդի մասին, որը Հայաստանում զարգացման փուլում է:

Սեմինար-հանդիպման մյուս մասում Էրիկ Խաչատրյանը հակիրճ ներկայացրեց՝ ինչպես սկսել բիզնես bootstrap-ի միջոցով: Bootstrap-ը տերմին է, որ նշանակում է՝շատ քիչ, չնչին գումարով սկսել և ստեղծել բիզնես: Գործարարը ներկայացրեց իր և ընկերության հաջողությունները:

«Rooqet» ընկերությունը զբաղվում է վաճառքով, իսկ բիզնես ծրագիրը սկսել ենք՝ ներդնելով ընդամենը 15 դոլար»,-ասաց Էրիկ Խաչատրյանը:

Էրիկը խոսեց նաև այն մասին, թե ինչպես են ստեղծվում բիզնես ծրագրեր ամբողջ աշխարհում և ինչ փուլերով են ընթանում.

ԻՆՉՊԵՍ ՀԱՍՆԵԼ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ

«Ներդնելով միանգամից մեծ գումար և աստիճանաբար սկսել աշխատել, ինչը շատ տարածված է այսօր Հայաստանում: Գոյություն ունի «Sweet empty» տերմինը, երբ գործարարները համախմբվում են ոչ թե գումարի, այլ գաղափարի շուրջ: Յուրաքանչյուրն առաջարկում է իր վաճառքի և տեխնիկական գիտելիքները, աշխատում և վերջում ունենում տոկոսներ»:

Էրիկ Խաչատրյանը խոսեց նաև «ստարտ ափ»-ի շրջանակներում ամենատարածված գումար հայթայթելու տարբերակների՝ դրանցում գումարներ ներդնելու և ավելի բարձր արժեքով վաճառելը մասին:

Ինչպես Դավիթ Յուզբաշյանն, այնպես էլ Էրիկ Խաչատրյանը նշեցին՝ պետք է անդադար աշխատել: Սեմինարը եզրափակվեց «bootstrap»-ի լավ և օգտակար կողմերն առանձնացնելով, որոնցից են՝ժամանակի տնօրինումը, քիչ ներդրումները և սեփական մասնաբաժինը կառավարելը:

Սեմինարավարները զրույցի վերջում պատասխանեցին ուսանողների հարցերին

Լիլիթ ԱՃԵՄՅԱՆ
ՀՊՄՀ հեռուստալրագրության բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի

«ՏԱ՛Ր ԻՆՁ ՔԵԶ ՀԵՏ ԴԵՊԻ ԱՐԵՎ»

«Պատանեկությանս երազանքն է եղել՝ լինել գրողների միության անդամ, իսկ դրան հասնելու համար պետք է մի քանի գիրք ունենայի»... Այդ երազանքն էլ Վարդուհի Բագրատյանին օգնեց հասնել իր երազանքին և ունենալ այդքան սպասված բանաստեղծությունների ժողովածուն՝ «Տա՛ր ինձ քեզ հետ դեպի արև»: Իսկ թե ինչու արև՝ պատասխանում է.«Քանի որ, արևը խորհրդանշում է հաղթանակը, ջերմությունը և ապագայի սպասումը»:

Վարդուհին բանաստեղծական առաջին քայլերն արել է ութ տարեկանից: Պոեզիայի հանդեպ մեծ սերը դեռ մանկուց է ծնվել.«Միշտ սիրել եմ գրել, հատկապես հանելուկներ, ու երբ տեսնում էի, թե ինչպես է պապիկս ոգևորում, ավելի էի ոգեշնչվում»: Պապիկը՝ Գառնիկը, հպարտությամբ բոլորին ասում էր, որ 5 տարեկանից սկսած բառը ոչ թե վանկերով, այլ միանգամից կարդում ու արտասանում էի:

Վարդուհին ստացել է բարձրագույն կրթություն, մեծ սիրով է հիշում իր դասախոսներին: Արձակ գրել չի ստացվում. որոշ գրողների համար դա թե՛ առանձնահատկություն է, թե՛ խնդիր: «Արձակ չեմ կարողանում գրել, ճիշտ է, փորձել եմ, բայց ապարդյուն: Բանաստեղծություն գրելիս էլ չեմ նստում և տրամադրվում, գրում եմ միանգամից ու վերջում ստացվում է այն, ինչ կա»:

«Մի անգամ երթուղայինի մեջ էի ու մտքիս եկավ մի բանաստեղծություն ու միանգամից գրի առա, դա ինձ մոտ լինում է անսպասելի ու միանգամից»,-հավելում է նա: Իսկ գրքի շնորհանդեսի մասին էլ պատմում է մեծ ոգևորությամբ. «Ճիշտն ասած, գրքի շնորհանդեսը պետք է լիներ ավելի շուտ, բայց համավարակով պայմանավորված, եղավ անցյալ տարվա սեպտեմբերին: Գրքում զետեղված են սիրո, հավատի, հայրենիքի թեմաներով գրված բանաստեղծություններ:

Վարդուհին ընդգծում է, որ գիրքը յուրաքանչյուրին նվիրելիս՝ իրեն բնորոշ, արևի պես ջերմացնող խոսք էր գրում, իսկ մարդիկ ջերմանում էին դրանից: Մի խոսքով, ամեն բան հրաշալի անցավ, բայց առանց իր հարազատների, ընկերների և աջակցող մարդկանց ոչինչ չէր ստացվի:

Վարդուհին սիրում է նաև երգել, հայրիկին նվիրված երգ և տեսահոլովակ ունի:

Այժմ գրում է «Փոքր Միերի» շարունակությունը, հրատարակելու ցանկություն ունի: Ո՛ր բանաստեղծություններն է հավանում հարցին էլ պատասխանում է՝ գրքի վերնագիրը՝ «Տա՛ր ինձ քեզ հետ դեպի արև»:

Անահիտ ՍՏԵՓԱՆՅԱՆ
ՀՊՄՀ հեռուստալրագրության բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի

ՀՆԳՕՐՅԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՊԱՏՄԱԲԱՆԻ ՕՐՎԱՆ

Երևանի պետական համամալսարանի, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի և Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի համագործակցության շրջանակում ԵՊՀ Պատմության ֆակուլտետի դահլիճում կազմակերպվել էր Երիտասարդ պատմաբանների միջազգային հնգօրյա գիտաժողով:

ԵՊՀ տարբեր ֆակուլտետների ուսանողական գիտական ընկերությունների նախաձեռնությամբ կյանքի կոչված գիտաժողովը համախմբել էր ոչ միայն հայաստանյան բուհերի (ԵՊՀ, ՀՊՄՀ, ՀՀ ԳԱԱ ԱԻ, Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան, Գավառի պետական համալսարան, Վանաձորի պետական համալսարան, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան) ու կրթական կենտրոնների, այլև օտարերկրյա մի քանի համալսարանների (Հարավային դաշնային համալսարան (ՌԴ), Մոսկվայի քաղաքային մանկավարժական համալսարան (ՌԴ)) երիտասարդ պատմաբաններին:

Միջազգային գիտաժողովին բացման խոսք ասացին ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան էդիկ Մինասյանը, ՀՊՄՀ Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկան էդգար Հովհաննիսյանը և ՀՀ ԳԱԱ ԱԻ փոխտնօրեն Գոռ Մարգարյանը:

ՀՊՄՀ ուսանողները գիտաժողովին ներկայացրին Տիգրան Մեծի կերպարը գեղանկարչական արվեստում, Սան-Ստեֆանոյից մինչև Բեռլին, նախնիների պաշտամունքը Հայկական լեռնաշխարհում և դրա մնացուկները մեր օրերում, թաղման ծեսի առանձնահատկությունները հայաստանյան եզդիների շրջանում, պառլամենտի զարգացման փուլերը և պառլամենտի կայացման սահմանադրահիրավական նախադրյալները Հայաստանում:

Ապագա պատմաբանների զեկուցումներն ընդգրկում էին նաև ֆրանս-օսմանյան ռազմաքաղաքական և առևտրատնտեսական հարաբերությունները XVI-XVIII դարերում, հրեատեցության (անտիսեմիտիզմ) դրսևորումները միջնադարյան եվրոպական իրականության մեջ, քոչվորի կերպարն ու ընկալումները արևելաքրիստոնեական աղբյուրներում (11-15 րդ դարեր):

Դեկտեմբերի 3-ին Մանկավարժական համալսարանում ամփոփվեցին միջազգային գիտաժողովի արդյունքները:

ՀՊՄՀ Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկան էդգար Հովհաննիսյանը շնորհավորեց գիտաժողովի մասնակիցներին՝ ուսանողներին՝ կարևորելով նրանց առաջին քայլերը՝ գիտելիքների, փորձի և մասնագիտական հմտությունների ձեռքբերման ճանապարհին:

«Եթե ուզում եք հասնել բարձունքների՝ պետք է շատ աշխատեք, արդյունք տաք,-ուսանողներին հորդորեց Մանկավարժական համալսարանի ռեկտորի պաշտոնակատար Աշոտ Խոտեցյանը:-Վստահ եմ, որ ձեր աշխատանքը նպատակին կծառայի, բայց դուք շատ անելիքներ ունեք այն դաշտում, որը պատմագիտական լուրջ հետազոտությունների կարիք ունի և որի բանալին գտնվում է ձեր ձեռքում»:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց Արևելագիտության ինստիտուտի տնօրեն Ռոբերտ Ղազարյանը, ով կարևորեց զեկուցումների թեմատիկ և բովանդակային ընդգրկումը՝ հնագույն փուլերից մինչև մերօրյա պատմությունը:

«Սա մի հետաքրքիր դպրոց է, որով անցնում են ապագա գիտնականները»,-ասաց նա:

ԵՊՀ Պատմության ֆակուլտետի դեկան էդիկ Մինասյանը գոհունակությամբ խոսեց պատմաբանի օրվան նվիրված գիտաժողովի կազմակերպման մասին՝ արձանագրելով. «Սկիզբը դրված է, այն էլ՝ լավագույն սկիզբ, սա այն փորձառությունն է որով պետք է կայանաք»:

Մատնանշելով տարբեր ինստիտուտների համատեղ աշխատանքը՝ նա փաստեց՝ սա համագործակցության լավագույն արգասիքն էր:

Էդգար Հովհաննիսյանը շնորհակալություն հայտնեց ՀՊՄՀ դասախոս Գոռ Մարգարյանին՝ գիտաժողովը պատշաճ մակարդակով համակարգելու համար, որից հետո գիտաժողովի մասնակիցներին հավաստագրեր հանձնվեցին:

Միլվա ԱՍՐՅԱՆ

Նոր մեթոդական ձեռնարկ

Նոյեմբերի 26-ին Երևանի №104 դպրոցում յուրահատուկ օր էր: Դպրոցի տնօրեն, մանկավարժական գիտությունների թեկնածու Նաիրա Մարտիրոսյանի «Միջոցառումը՝ որպես կրտսեր դպրոցականի դաստիարակության տեխնոլոգիա» ուսումնամեթոդական ձեռնարկի շնորհանդեսն էր, որին մասնակցում էին Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մանկավարժության ամբիոնի դասախոսները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի Հանրակրթության վարչության գլխավոր մասնագետ Հ. Իսոյանը, դպրոցների տնօրեններ, ուսուցիչներ:

Տնօրեն Նաիրա Մարտիրոսյանն իր ելույթում արժևորեց Մանկավարժության ամբիոնի հետ համագործակցությունը՝ առանձնակի շնորհակալություն հայտնելով ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ահդա Թոփուզյանին՝ իր ձեռնարկի ստեղծմանն աջակցելու, ինչպես նաև դպրոցի մանկավարժական խորհրդին՝ շնորհանդեսը նախաձեռնելու, 93-ամյա իր առաջին ուսուցչուհուն՝ դասվար Ռ. Մելքոնյանին և դպրոցի նախկին գրադարանավար Ք. Հախնազարյանին՝ իր մեջ բարոյական որակներ ձևավորելու և իր մայրիկին՝ մեր դպրոցի նախկին ուսուցչուհի երջանկահիշատակ Մ. Ապերյանին՝ մարդկային հատկանիշների ձևավորման և փոխանցած արժեքների համար:

Հեղինակն ընդգծեց ուսումնամեթոդական ձեռնարկի կարևորությունն ու արդիականությունը՝ հույս հայտնելով, որ այն կդառնա ուսուցչի սեղանի գիրք:

Ելույթ ունեցողները վստահ էին՝ մեթոդական ձեռնարկում ամփոփված միջոցառումները, թատերականացված դասերը և մեթոդական խորհուրդները նպաստելու են դպրոցականների դաստիարակության գործընթացի արդյունավետությանը:

ՇԵՔՍՊԻՐՅԱՆ 15-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆՈՒՄ

Նոյեմբերի 15-20-ը Երևանում անցկացված Շեքսպիրյան 15-րդ միջազգային թատերական փառատոնին Մանկավարժական համալսարանի օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և սոցիալ-մշակութային գործունեության ամբիոնի դասախոս Արմեն Խաչատրյանը և ուսանողները լուսաբանեցին լուսանկարչական աշխատանքներով:

Փառատոնի փակման հանդիսավոր արաղությանն ամփոփվեց նաև «FestOFF» ծրագիրը՝ նախատեսված Հայաստանից և արտերկրից ուսանողների և անկախ թատերախմբերի համար: Ուրախությամբ պետք է նշենք, որ ծրագրի հաղթող է ճանաչվել Մանկավարժական համալսարանի ռեժիսուրայի ամբիոնի շրջանավարտ Մարիամ Հարությունյանը՝ «Շեքսպիրյան Տրիլոգիա» բեմադրությամբ:

Մանկավարժականի մրցանակակիր շրջանավարտին Երևանի Շեքսպիրյան 15-րդ միջազգային թատերական փառատոնը նվիրել է շեքսպիրյան թեմատիկայով նոր ներկայացման ամբողջական ֆինանսավորում:

«Վերածնունդ» դպրոցի առանցքային բաց դասերը

ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցի 2021-2022 թթ XXXIV ուսումնական տարին առանձնահատուկ էր հետաքրքիր բաց դասերով և հյուրերով:

ՌԴ-ում Հայաստանի Հանրապետության դեսպանի կինը՝ Մերի Տոդանյանը, դպրոցի սաներին ներկայացրեց իր հասարակական գործունեությունը, որի արդյունքում Հայաստանն էլ ավելի ճանաչելի է դառնում տարբեր միջազգային օղակներում:

Տարեցտարի կարմիր թելով անցնում են հայոց պատմության առանցքային դրվագները, որոնք պատասխան են տալիս «ով ենք մենք և ուր ենք գնում» հարցին: Ուստի պատահական չէ, որ առաջին իսկ դասը նվիրվում է «Թարգմանչաց տոնին», որի շրջանակներում դպրոցի ուսուցչական կազմը՝ ի դեմս տնօրեն մանկավարժական գիտությունների թեկնածու Շողիկ Փահլևանյանի ներկայացնում է գրերի գյուտի դերն ու նշանակությունը հայ ժողովրդի կյանքում: Այս դասի տրամաբանական շարունակությունն է քրիստոնեության տարածմանը նվիրված դասախոսությունը, որն ավանդաբար անց է կացվում հոկտեմբերի երկրորդ կեսին, երբ նշվում է Գրիգոր Լուսավորչի օրը: Այս տարի դպրոցի աշակերտներն ունկնդրեցին ՌԴ-ում ՀՀ դեսպանության երկրորդ քարտուղար, քաղաքական գիտությունների թեկնածու Գեղամ Ադամյանին, ով հանգամանորեն ներկայացրեց քրիստոնեության մուտքը Հայաստան և նրան ուղեկցող հասարակական-քաղաքական գործընթացները:

«Վերածնունդ» դպրոցի սաներն արդեն գիտեն նաև «Սասունցի Դավիթ» էպոսի՝ (որն այս տարի դարձավ 1082 տարեկան) ՅՈՒՆԵՍԿՕ-ի ոչ նյութական արժեքների ցանկում ընդգրկված լինելու մասին:

Աշնանային ուսումնական ամիսներն ավանդաբար եզրափակվում են «Հրաժեշտ աշնանը» բաց դասով, որի ընթացքում նախադպրոցական և կրտսեր տարիքի դպրոցականները ներկայացնում են իրենց ձեռքի աշխատանքները:

Բարձր դասարանների դպրոցականներն ուսումնասիրում են պետական խորհրդանիշները: Այս տարի այդ դասին, նվիրված էր դրամի 28-ամյակին, ելույթ ունեցավ դեսպանության տնտեսական բաժնի ղեկավար Արման Տոդանյանը: Հատկանշական է, որ աշակերտներն աչքի են ընկնում իրենց ակտիվությամբ և յուրաքանչյուր դասին ներկայացնում են իրենց թեմատիկ զեկույցները:

Ընդգծենք, որ այս ամենի հետ մեկտեղ մեծ ուշադրություն է դարձվում հայեցի դաստիարակությանն ու ժամանակակից էթիկային, ինչի մասին իր հետաքրքիր և բովանդակալից խոսքն ասաց ակադեմիկոս, ՄԳԻՄՈ-ի դասախոս Բաբկեն Բաղեյանը:

Նշենք, որ «Վերածնունդ» դպրոցի դասերն արդեն երեսունչորս տարի ավանդաբար անց են կացվում Լազարյանների պատմական շենքում, որտեղ այժմ գտնվում է ՌԴ-ում ՀՀ դեսպանությունը: Աշակերտները հնարավորություն են ունենում շրջել այդ պատմական շենքում և մոտիկից ծանոթանալ Լազարյանների տոհմի պատմությանն ու գործունեությանը, որի մասին մանրամասն պատմեց դեսպանության մամլո ծառայության ղեկավար, քաղ. գիտ. թեկնածու Արամ Ոսկանյանը:

Այսպիսով, նման բազմաբովանդակալի բաց դասերի շնորհիվ աշակերտները տեղեկանում են հայ ժողովրդի պատմության, անցած ուղու և համաշխարհային պատմության մեջ թողած նշանակալի դերի մասին:



ՄԱԿ-Ի ՍԵՎԱՆՅԱՆ ՖՈՐՈՒՄՈՒՄ

ՆԿԱՐՈՒՄ՝ Մանկավարժական համալսարանի ուսանողները

«Դի-Վի-Վի ինթերնեյշնլի» հայաստանյան գրասենյակը ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ համագործակցությամբ իրականացնում է «Մեծահասակների կրթությունը՝ ի նպաստ կայուն զարգացման նպատակների» արշավը, որի շրջանակում նոյեմբերի 27-ին Սևան քաղաքում տեղի է ունեցել «Կայուն զարգացման նպատակներ. կանգառ Սևանում» երիտասարդական ֆորումը: Ֆորումին մասնակցում էին 8 երիտասարդական խմբեր ՀՀ տարբեր մարզերի քաղաքներից և կառույցներից, որոնք մեկ օրվա ընթացքում տարբեր դիտանկյուններից ուսումնասիրեցին ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակները և մշակեցին ծրագրեր՝ ուղղված դրանց իրագործմանը:

Ֆորումին ակտիվ մասնակցություն ցուցաբերեց Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի և Սկզբնական կրթության ֆակուլտետների ուսանողներից կազմված թիմը՝ Մանկավարժության ամբիոնի դոցենտ, մ.գ.թ. Գ. Եգանյանի աջակցությամբ:

Արշավի նպատակն է երիտասարդների և մեծահասակների շրջանում բարձրացնել Հայաստանում ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակների մասին իրազեկվածության մակարդակը, ինչպես նաև վեր հանել Հայաստանում կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ) իրագործման ուղիներն ու այն խնդիրները, որոնց լուծմանը կարող է նպաստել մեծահասակների կրթությունը:

ՀՊՄՀ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ՈՒՍԱՆՈՂԻ ՕՐԱԳՐԻՑ

Ետնաբեմ

Հիմա, երբ ամեն ինչ հնարավոր ու կարելի է թվում, երբ ամեն ինչ փոխվում է վայրկյանի արագությամբ, երբ մոռանալը սովորական է, իսկ խոսք տալը՝ հեշտ այնքան, ես գտա մեր ֆակուլտետի չորրորդ հարկը: Դռները՝ փայտից, աստիճանները՝ փայտից, կահավորանքը՝ կոկիկ, թվում է՝ իրերն էլ գիտեն իրենց կանոնիկ պահել այստեղ:

Երևի բոլոր բանասերները երազել են փայտե տանիքի գրադարանի մասին: Երազանքներո իրականություն դարձնողներ կան: Սա հստակ արարողակարգ է: Այս աստիճաններով զգույշ են բարձրանում, որովհետև սա տան նման է, երբ ոտնաձայնից գիտես՝ ով է գալիս:Այստեղ գիտեն, որ դու ես գալիս, և բարևելու պատասխան ժպիտից զգում ես՝ սպասում էին: Անջատում ես հեռախոսն, ու ամբողջ աշխարհն անձայն է դառնում, և լսվում է միայն աստիճանների ճռճռոցը. մեկը բարձրանում է թաթերի վրա կամ դուռը մեղմիկ է թակում: Թակելը մեղմիկ լինո՞ւմ է:

Ինձ դուր է գալիս այս կանոնակարգը: Դեռ ամռանը մտածում էի, թե ինչքան արագ է հիմա փոխվում ամեն ինչ: Եթե առավոտյան պայմանավորվել եք հանդիպում նշանակել երեկոյան, հանդիպելուց առաջ կարիք կա մեկ անգամ ևս ճշտել՝ արդյո՞ք ուժի մեջ է հանդիպումը: Եվ հիմա ամեն ինչի իսկական լինելը ճշտելու կարիք կա, թե արդյո՞ք ուժի մեջ է: Իսկ առաջ մարդիկ պայմանավորվել են ամիսներ ու տարիներ հետո և եկել են այդ հանդիպմանը. ոչինչ փոխված չի եղել, ոչինչ չի կորցրել կարևորությունը, ժամանակը չի կարողացել արժեզրկել: Եվ մեկ ամիս անց էլ, առանց հեռախոսի ու համացանցի, առանց հազար տեսակի մեքենայի, ուղղակի ձիով կամ ոտքով եկել են նախորդ ամիս պայմանավորված հանդիպմանը: Ուժի մեջ է եղել հավատարմությունը:

Մի մեծ բան գտածի ուրախությունն ունեմ, որ կարող եմ հիմա Ձեզ պատմել, թե կարիք չկա ոչինչ ճշտել ու վախենալ իսկության համար: Այստեղ հեռախոսը երկրորդական ու երրորդական անհրաժեշտության առարկա է, իսկ ուրբաթ օրվա որոշումն ուժի մեջ է երկուշաբթի՝ նույնիսկ երկու ոչ աշխատանքային օրերից հետո: Ես չգիտեմ՝ այս ամենը Ձեր հոգուն որքան է հարազատ, բայց ինձ դուր է գալիս, որ այստեղ չեն մտածում դրա մասին: Նպատակ չկա որևէ բան ցույց տալու կամ համապատասխանեցնելու դրսից մեկի պատկերացումներին: Թումանյանական իմ տետրի կազմին ներսից գրել եմ. “Искусство« как и жизнь« слабым не по плечу”, որն, իհարկ, ես չեմ ասել, այլ՝ Բլոկը, իսկ ես հավանել եմ ու գրել իմ տետրի կազմի վրա՝ ներսից: Քիչ չի, չէ՞:

Թվերի ու հաշվարկների, վայրկյան չկորցնելու այս արագ դարում ես գնում եմ ընթերցասրահ, փակում եմ դուռը ներսից աշխարհի վրա, և մայրիկն ու ընկերները գիտեն, որ անհասանելի եմ մինչև փայտե աստիճաններից իջնելու պահը: Իմ ընկերները, որոնք դեռ չեն եղել այս ընթերցասրահում, ամեն ինչ հստակ պատկերացնում են ու գիտեն՝ որտեղ ու ինչպես է, որովհետև... խեղճերն ուրիշ ճար չունեն, այնքան եմ պատմել: Իրենք ինձ հազար անգամ ասել են՝ նկարիր, տեսնենք, բայց իրենք չգիտեն, որ այս փայտե թագավորության մասին պատմում են միայն կամ ինձ պես խոսել չեն կարողանում, դրա համար գրում են (իբրև թե գրել կարողանում են)...

Դասը 9:30-ին է սկսվում: Դասերը՝ գուցե, բայց այս մեկը 8-ից սկսվում է: Արարողակարգը շարունակվում է: Դասից

մի քանի րոպե առաջ բացել պատուհանը, վերևից իջեցնել ու միացնել բոլոր հնարավոր սարքերը, ուղղել, որ ոչ մի սանտիմետր ծուռ չլինի ու այդ ամենն անել որպես անհերքելի ճշմարտություն, որպես միակ ուղիղ ճանապարհ: Մեկը ցուցակն է տալիս ուսանողների, մյուսը միացնում է սահիկաշարը, մեկը հիշեցնում է, որ դիմակը պետք չի իջեցնել:

Ետնաբեմը կահավորված է ամեն մանրուքով, որ մենք գրականություն սովորենք: Ետնաբեմում ամենակարևոր մարդիկ են միշտ լինում, որոնց անունը չի հնչում բեմից, բայց հենց իրենք են հիմնականում բեմը սարքողները: Ետնաբեմը թիկունքն է, իսկ թիկունքին կանգնած լինելու համար վստահության ծովի տեր պիտի լինել:

Եվ հանդիսավոր իջնում է աստիճաններով: Եվ ինձ համար չկա այլևս հարց ու դժգոհություն, չկա բողոք, չկա անհամաձայնություն չքնած գիշերների: Կա երաժշտություն, որովհետև գրականությունն է լսվում: Այսքան նրբանկատորեն ամեն ինչի մասին հոգ տանելն է հիմք ստեղծում այդքան պահանջկոտության համար, դրա համար էլ բացականներն անհերելի են այդքան: Պատկերացրեք արթնանալ արևի հետ, մաքրել տան բոլոր անկյունները, գրադարակների փոշին վերցնել, սենյակի արծանիկները գեղեցիկ ու հավասար դասավորել, երեխաների պատվոգրերն ու գովասանագրերը դնել դաշնամուրի գլխին, սեղան գցել, հագնել դասական զգեստն ու կանգնել դռան դիմաց՝ դիմավորելու հյուրին, ու հանկարծ ավագը ծանր ոտքի կանգնի և ասի՝ մարզից է գալիս կամ էլ վատառողջ է: Գրականությանը չպիտի տա թևափափ լինել...

Եթե համարձակությունս ների, կնկարեմ, կտեսնեք...

Տաթև ԹԱՄՐԱԶՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետ,
3-րդ կուրս

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է: Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 6.12.2021 թ.

Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ